

առեալ ընթրիս եւ պատիւ եկելոյն ի մէջ նաւի իւրում, և բան եղեալ սպասաւորաց, զի յանկարծակի սպանեն զնա եւ ի ծով արկանեն: Եւ նոյն ժամայն խաչ դրոշմեալ ի դէմս իւր եւ համբուրեալ՝ զգտակ Թռանկաց դնէ ի գլուխ իւր, եւ զամենայն կալանաւորսն յերկաթէ արձակէ ի կապից և զխաչէլէմ պայրախ բարձրացուցանէ ի գլուխ նաւին, եւ հրամայէ բանալ զառաքաստն եւ քարշել զնաւն, եւ ալլոցն հարեալ զթմբուկ գոչելով ընդ փողոցն, եւ այնպէս վարէ զնաւ իւրայնօք հանդերձ եւ զօրօք եւ ծառայիւք՝ զնաց եմուտ ի Թռանկստան Վենետիկոյ: Եւ ալլ նաւքն տեսեալ զայն՝ մտանեն զհետ նորա և ոչ հասանեն, ալլ դարձեալ ամօթալից: Եւ եկին ամենայն նաւք Առաջաւորաց Գշի աւուր (14 Փետր.) պահոցն, պատմեցին զայս ստուգապէս լինել իրիս: Եւ անուշ առն այնորիկ մականուամբ Թռէնկ Ահմէտ աղա՝ խառն ալեօք, որ էր յազգէ Դադմատունեաց, զոր ի տղայութեանն բերեալ էին աստ: Զայս լուեալ վէզիրին եւ ամենայն մեծամեծացն եւ աստ եղելոցն զամօթի հարկանէին:

Յետ սակաւ աւուրց եկն զիր ի տէֆտէրտարէն առ տէֆտէրտարն Ստամպուլու թէ Ժ քսակ միրին առցես ի պատրիարքէն Հայոց, եւ նա կոչեաց եւ ասաց զիրն, և սա պատասխանեաց թէ Այդքանով չեմ առեալ զպատրիարքութիւնս, ալլ թէ՝ ԶինՌ-աւ: Եւ յետ բազում բանից ճՄ ղուռուչ տվաք առ նա եւ յանձն առ առնել արդ առ մեծ տէֆտէրտարն թէ Այսքան է ասացին եւ դու այդչափ ուզես: Յայնժամ էմր առաքեալ թէ Դու որ իմ եղբայր Սո[ւլէյ]ման զայմ[ախամ] փաշայ, ի հասանել հրամանացս իսկ և իսկ ատեն եւ ժամ ասել մի՛ տացես, ալլ կալցիս զդայ յերկաթս մինչեւ հատուցէ զԺ քսակն: Զայս տեսեալ